

## ՊԱՏՄԱԿԱՆ

### ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ S. ՄԵՍՐՈՊ ՎՐԴԻ. ՆՇԱՆԵԱՆԻ

Ցիշատակարան 1917 Յունիս 1:

1918 Ապրիլ 21 Ծր.- Լուսաւորեայի արարադութիւնը կատարուեցաւ նախընթաց տարիներու յար եւ Յման: Ցոյները զարմանալի կերպով փոխուած էին. հաշտ ու սիրալիք վարմունք ցոյց կու տային: Նորայ կապող գիմուռըներ չմտան Ս. Յարութիւն ուրիշ տարիներու նման: Բոլիսներ արթուն կը հսկէին Հատուատ Պէյի դեկավարութեամբ: Բազմարիւ անգլիացի սպաներ հանդիսաւն էին, որոնց գոլվութ կը գտնուեր գիմուռական կառավարչ Մր. Սրոռու: Վերջնոյ համար յոյները պատուանդանով թիկնաբոռ մը դրին Ս. Գերեզմանի դրան ձախակողմք: Ասոր համար դիտողութիւն եղաւ մեր կողմէն: Հանդէս անցաւ խաղաղ, առանց որեւէ միջանդէպի:

Հատուատ պէյ այսօր զարմանալի կերպով կակուցած կ'երեւէր, ու ինձ նկատմամբ ժծնող ու հանոյակատար ընթացք մը ուներ:-

23 Բշ.- Հանդիսաւոր պատարագ Ս. Յակոբայ աւագ սեղանը. Ժամարաք' Թորգոմ Եպիսկոպոս: Պատարագի միջոցին հանդիսաւոր գրահարանական մաղրանք եղաւ Մեծն Բրիտանիոյ ձորեն Ե. քագաւոր կայսեր գահակալութեան Ցրդ տարեդարձին առքիւ: Ներկայ էին նրուսադէմի Զինուռական կառավարիչ Մր. Սրոռու իր հետեւորդ սպաներով, անգլիական եպիսկոպոսը եւայլն: Մաղթանքն վերջ ժամարաք Սրբազնը արտասանեց ատենաքանութիւն մը, որուն անգլիերէն քարգմանութիւնը կարդաց Երուսաղէմացի Պր. Ղազարոս Մերկերեան:

Մայիս 1 Գշ.- 194 հոգի մեկնեցան

Կիպրոս Հայկական Լեգէնի մէջ ծառայելու: Մէջերնին էր Գր. Վ. Յովհաննէսեան:

2 Գշ.- Ֆրանչիսկեան երեք վարդապետները Թորգոմ Եպիսկոպոսի երթալով պահանջեցին որ իրենց Հոգբարատեան օրը, 1871էն ի վեր, Ս. Փրկչի մէջ պատարագելը արգիլուած իրաւունքը վերահաստատուի եւ բոյլատրուի յսուաշիկայ տօնին պատարագելը:

Սրբազնը պատասխանեց՝ թէ ինքը հոս իիւր ըլլարուն այդ մասին ունետեղեկութիւն չունի. Խնդիրը հասկնալէն վերջ իրենց պատասխան կը տրուի: Երեք վարդապետները մեկնեցան:

4/17 Ուր.- Ֆրանչիսկեան վարդապետներէն երկուէր եկան Թորգոմ Եպիսկոպոսի մօտ պատասխան առնելու ես ալ ներկայ էի: Մեր որոշ պատասխանը եղաւ հետեւելալը.- Ֆրանչիսկեանց Փրկիչ եւ Ս. Յակոբը պատարագելը ժամանակին Հայ Միարանութեան կողմէ Թոյլտուութիւն կամ շնորհ մ'եղած է, հետեւարար այդ մասին չէ կարելի իրաւունքի խնդիրը ընելի: Նու արդէն այդ խնդիրը մեզ համար միանցամ ընդ միշտ վերջացած է, ինչպէս ժամանակին Օսմաննեան կառավարութեան ալ յայտարարուած է ի պատասխան իրենց բողոքներուն:

11/24 Ուր.- Ըստ հրաւերի Թորգոմ Եպիսկոպոս եւ ես ներկայ եղանք Հրէից ընդունելուութեան, զոր ըրին Ճեներալ Ալամափի Պուխարան Թաղը մեծ տան մը մէջ: Ճառեր կարդացին երկու հրեայ ծերունի բարունիներ երրայեցերէն եւ Միունիստ պատգամաւորութեան նախագահը նոր Վայզման անգլիերէն:

Ժեներալը պատասխանեց: Եղիպատական նուագախումը կտորներ կ'ածէր և հրեայ ժառանայն խումբը կ'երգէր: Յետոյ ընդարձակ դահլիճի մը մէջ քէյասեղան տրուեցաւ: Հրաւիրեալք խմբուեցան սեղաններու շուրջ: Մենք կը գտնուէինք ժեներալի սեղաննեն վրայ:

22/4 Գշ.- Պր. Վահան Թէքէեան ծրուտադիմ ժամանեց: Այս առքի յիշենք թէ օր առաջ Պօղոս Փաշա Նուպարէ ստացուած էր հետեւեալ հեռագիրը...

### Toulouse 3-5-18 Congrégation Arménienne Jérusalem

Comme président délégation nationale représentant Catholicos et en attendant récéption bulle vous prie reconnaître Tékéyan anciennes attributions représentant patriarcat.

Noubar

25/7 Յունիս Ռւր.- Զին. Կառավարիչը փոխ այցելութեան եկալ Պ. Վ. Թէքէեանի: Նախապէս եղած կարգադրութեան համանայն պատրիարքարանի դահլիճն մէջ ներկայ գտնուեցաւ ամբողջ հոգիուրական դասը: Կառավարիչի մեկնելն վերջ կարդացուեցաւ Նգիպոսսի քեմական ժողովներու Միարանութեան ուղղած գիրը, որով կը ծանուցանէր թէ Թորգոն Նպիսկոպոս և Թէքէեան պատուիրակ կարգուած են եւ պաշտօն ունին Ս. Աքռոնի քարեկարգութեան մասին հարկ եղած կազմակերպական ու ելուսական կարգադրութիւններն ընել: Խօսեցան Թորգոն Նպիսկոպոս և Վահան Թէքէեան: Վերջինս շեշտեց մասնաւրապէս՝ թէ ինքը ուղղակի պատասխանատու է Նգիպոսսի քեմական ժողովներուն: Երուսաղէմի պատրիարքական աքռող կը փորձուի ենթարկել առաջնորդական պարզ վիճակի մը: Ո՞ւր կ'երբանք, չեմ գիտեր:

25.- Քանի մը օր առաջ տեղեկացանք թէ Յակոր Զէքինեան վախճաներ է Դամակոսի մէջ տարւոյս Յունուար 10ին:

Յունիս 3 Կիր.- Եղիպտական բանակի ընդհանուր հրամանատար Ժէնէրալ Ալամպի ժամը 2.30ին վանք այցելեց հետեւորդ ունենալով Ծրուտադիմի գինուորական կառավարիչը և իր սպայակոյութեան երկու հոգի: Նախ առաջնորդուեցաւ եկեղեցի, ուր ուշադրութեամբ դիտեց ցոյց տրուած հետքիւններն, ասեղնագործութիւններն, եւայն: Ապա ելաւ, Պատրիարքարան ու պատուայիրուեցաւ: Ճեներալը դոնէն ընդունեց Թորգոն Նպիսկոպոս իր հետ ունենալով Մկրտիչ, Գիւտ Նպիսկոպոսները, Դաւիթ և Մեսրոպ վարդապետները, Եսայան և Թէքէեան պարունները: Այցելութիւնը տեւեց մէկ ժամ:

Յունիս 8 Ռւր.- Վախճան Թէքիրտաղցի Մարիամ Մայրապետի:

10 Կիր.- Հոգեգալուստ.- Թորգոն Նպիսկոպոս պատարագեց ի Ս. Փրկիչ եւ քարոզեց:

24 Կիր.- Թորգոն Նպա. Ս. Յակոր աւագ սեղանի վրայ ժահանայ ձեռնադրեց, Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն համար, Պ. Գալուստ Ռուկերչանը ու անուանակոչեց Տ. Հայկազուն:

29 Ռւր.- Գարեգին Վրդ. Մանուկրեան Դամակացի 44 տարեկան վախճանեցաւ լեարդի հիւանդութենէ:

(Տարումակելի)